Հարեւանները դռները բանալիով փակում են:

Տօն օրերին, ճաշից յետոյ չեն վիճում: Մաքուր հագնուած, թեւը թեւին, գնում են բուլվար մանելու: Լուռ ու մունջ նստում են ծառերի տակ, նայում անցորդներին ու վերադառնում տուն:

Ամբողջ օրը մնում են փակուած եւ լուռ:

* * *

Այս տան մէջ ուսելիքին մեծ նշանակութիւն են տալիս: Պատշգամի միւս հարեւանս իր առած միսը ցուցադրում է ամենքի առջեւ: Մօտենում է, նայում է, երկու մատով զգուշօրէն բարձրացնում է օդի մէջ, պտտցնում, չորս կողմը նայում: Եթէ մէկը տեսնի, խորհրդածութիւններ է անում:

— Ղարուրզա ա, խորոված՝ համար լաւ ա... Այսօրուան օրս զասարները չո՛ւն են դառել, ուզած միսդ չեն տալիս. բայց ինձ տալիս ա, լաւ մուշտարի եմ...

Ժամերով կրակը փչում է: Թեւերը ծալում ու շատ լուրջ դէմքով մսի կտորները շամփուրին անցնում:

Սենեակից, բարձր պոռում է, որպէսզի բոլոր բնակիչները լաւ լսեն:

— Աղջի, Սո՛նա, շամփուրը լա՛ւ դարձուր, իւղերը թափում են:

Բակում, պառաւ կնոջ թոռնիկները, աչքերնին վեր, թուքը կուլ տալով, սոված կատուների նման նայում են:

Պառաւ կինը տեսնում է, բարկացած դուրս պրծնում: Տղաքներին ծեծում, աղմկում ու ձայնը գլխին՝

— Տո՛, չո՛ւներ, կորկոտը իւղալի մսով եփել եմ, առջեւնիդ դրել, չէ՛ք ուտում, հիմա էլ եկել ուրիշի՞ կերածին էք նայում:

Հարեւանները դուրս են գալիս:

Պառաւը բացատրում է:

— Կերակուրը լիքը լիքը ամանով չեն ուտում, մսերը թափում եմ շներին, խորոված՝ պաղում ա, եկել են ուրիշի մի կտոր միսին են նայում: Անքաղաքավարնե՛ր: Վա՛յ ձեր հօրը, որ այդ տեսակ լակոտներ ունի...

Ամենքը հասկանում են, թէ կորկոտը եփուել է պառաւի երեւակայութեան մէջ միայն, թէ չուն չկայ, որին միսերը նետէ, թէ պառաւը պարզապէս նախանձում է հարեւանի խորոված՝ին եւ թէ խեղճ երախաները մեղք չունեն:

Խորոված՝ի տէրը հասել է իր նպատակին, գոհ է, պատշգամի վրայ մանելիս ու երկու մատներով ակռաներից մսի կտորներ հանում:

* * *

Ցմեռ է, բայց պատուհանի մօտ, սենեակի անկիւներում, դեռ մժեղներ կան:

Ամէն տեսակ միջատներ:

Լուացուելու տեղ չկայ: Լոյս չկայ, մոմ ենք վառում:

Մի պատուհան կայ՝ անկարելի է բանալ, բակը իր աղբով ներս կը խուժի: Տեղ չկայ շարժուելու, տեղ չկայ կարդալու, գրելու:

Արտասահմանում, երախաներիս այնքան լաւ բաներ պատմեցի «մեր Հայաստանի» մասին եւ հիմա ամաչում եմ: Նայում են բիչ-բիչ աչքերիս մէջ, տխուր, մելամաղձոտ:

«Սպասելու է, այս սենեակը ժամանակաւոր է, դեռ տեսնէք ինչեր պիտի լինեն»... Լսում են, ուզում են հաւատալ, եւ զգում եմ՝ չեն հաւատում: Եւ այդ ամենից սոսկալին է: Մեծերը, քարքարուտ, արիւնոտ ճամբաները անցել եկել են: Կանգ են առել: Սեղմել են իրենց սրտի դէմ սառը մի բան: Փակել են իրենց ներքին աչքը եւ կուրօրէն գնում են: Բայց երախանե՞րը: Նրանք, որ ամէն երեւոյթների առջեւ լարերը տեղը դրած ջութակի նման են՝ մեղեդի, երգ... Ու յանկարծ, այդպիսի յոռետեսութիւն, այդ դիակը իրենց ձեռքերի մէջ եւ այդ իմաստուն ժպիտը իրենց շրթունքների երկու ծայրերին:

Երախաների աչքերի մէջ դրուած են ապագայ բոլոր դժբախտութիւնները: Թեթեւ մի ակնարկով այդ կարելի է տեսնել ամէն տեղ, փողոցներում, տուների մէջ, դպրոցական նստարանների վրայ: Խաղում են, առեւտուր են անում, լկտի խօսքեր են ասում, ու ճակատագիրը նրանց սրտի մէջ, ամէն տեղ, ամէն մի վայրկեան ներկայ է: Փողոցի երախաները, խուժանը, երեսի վրայ լքուած այս անիչխանականները, վազվզում են փլած տուների շուրջը, կողոպուտի գնում, մաքուր հագնուած երախաներին ծեծում, դիւղացիների ձեռքից հաց խլում, ցրտի դէմ մաքառող թռչունների պէս կտուցները պատուհաններին զարնում ու

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան